

**ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ (ԱՃԹՆ)
ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲՈՒՄ (ԲՇԽ) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

2015 թվականի ընթացքում ՀՀ կառավարությունը և Համաշխարհային բանկը կազմակերպեցին մի շարք հանդիպումներ Երևանում և Լոռի, Վայոց Ձոր, Սյունիք մարզերում՝ տեղի ՀԿ-ներին և քաղաքացիական հասարակության ակտիվ անդամներին ԱՃԹՆ-ի գաղափարը ներկայացնելու նպատակով:

Այդ հանդիպումներից հետո, ԱՃԹՆ հարցերով հետաքրքրված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի տեխնիկական աջակցությամբ կազմակերպեցին երկու տասնյակից ավելի քննարկումներ՝ նվիրված Հայաստանի՝ ԱՃԹՆ-ին միանալու գործընթացում քաղաքացիական հասարակության դերի և մասնակցության, ինչպես նաև ԱՃԹՆ Բազմաշահագրգիռ կողմերի (ԲՇԿ) խմբում ներգրավվելու հարցերին:

Քննարկումներին մասնակցելու հրավերները կանոնավոր ուղարկվել են տասնյակ հասարակական կազմակերպությունների և Օրհուս կենտրոնների մոտ 110 ներկայացուցչի: Հանդիպումները տեղի են ունեցել Երևանում՝ շաբաթը մեկ կամ երկու անգամ: Այն անձինք, ովքեր հնարավորություն չեն ունեցել գալ Երևան, կարողացել են հանդիպումներին միանալ ինտերնետի միջոցով: Քննարկումները կազմակերպվել են բաց և թափանցիկ սկզբունքով: Յուրաքանչյուր մասնակից հնարավորություն է ունեցել ազատորեն արտահայտել իր կարծիքը և մասնակցել որոշումների կայացմանը: Բոլոր հանդիպումներն արձանագրվել են և էլեկտրոնային փոստով ուղարկվել են բոլոր մասնակիցներին, ինչպես նաև տեղադրվել են www.crm.aua.am կայքում:

Հանդիպումներին ներկա մասնակիցների գրանցման թերթիկները և քննարկումների արձանագրությունները հասանելի են հետևյալ հղումով.
<http://crm.aua.am/eiti/meeting-minutes-and-registration-lists/>

Մի քանի հանդիպումներ հատուկ նվիրված են եղել ԲՇԿ խմբում քաղաքացիական հասարակության անդամների ընտրության կարգի վերաբերյալ մի շարք հարցերի քննարկմանը: Քննարկման մասնակիցները համաձայնվել են ընտրելու իրավունք տալ քաղաքացիական հասարակության միայն այն ներկայացուցիչներին (հիմք ընդունելով Երևանում և մարզերում տեղի ունեցած հանդիպումների ժամանակ գրանցված մասնակիցների գրանցման թերթիկները), ովքեր ԱՃԹՆ-ի վերաբերյալ կազմակերպված քննարկումներին մասնակցել են մինչև 2016թ.-ի հունվարի 22-ը: Որոշումը հիմնավորվել է այն պատճառաբանությամբ, որ այս կերպ հնարավոր կլինի ԲՇԿ խմբում ՔՀԿ անդամների ընտրության ժամանակ կանխել նախկինում որևէ կերպ մասնակցություն և հետաքրքրվածություն չցուցաբերած կազմակերպությունների ու անհատների կողմից ընտրություն կատարելու և արդյունքների վրա ազդելու հնարավորությունը: Տվյալ որոշման արձանագրությունը հասանելի է հետևյալ հղումով http://crm.aua.am/files/2016/02/EITI_Meeting-Minutes_27-Jan-2016-Yerevan.pdf

ԱՃԹՆ Բազմաշահագրգիռ կողմերի (ԲՇԿ) խմբում ընտրվելու համար առաջադրվել են 7 թեկնածու՝ նախատեսված 5 տեղի համար: Թեկնածուների կենսագրությունները հասանելի են հետևյալ հղումով. <http://crm.aua.am/eiti/elections/>: Դրանք նույնպես էլեկտրոնային փոստով ուղարկվել են քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերին:

Նշված թեկնածուներից մարզային ներկայացուցչի քվոտայով ընտրվել է Աշխատավորների իրավունքների պաշտպանության միավորում ՀԿ-ի նախագահ Արթուր Ղազարյանը, իսկ գիտական հաստատության ներկայացուցչի քվոտայով ընտրվել է Երևանի պետական համալսարանի Կայուն զարգացման կենտրոնի փորձագետ Հարություն Մովսիսյանը:

Եվս 3 անդամի ընտրությունը կատարվել է Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով: Էլեկտրոնային փոստով քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցել է 49 հոգի: Էլեկտրոնային նամակ ստացել և դրա մասին հեռախոսազանգով լրացուցիչ տեղեկացվել

է 45 հոգի: Քվեարկությանը մասնակցել է 23 հոգի: Քվեարկության արդյունքների համաձայն ձայները բաշխվել են հետևյալ համամասնությամբ՝ Գրիգորյան Արթուր (Էկոիրավունք ՀԿ-ի նախագահ)- 22 ձայն, Ինգա Զարաֆյան (Էկոլուր տեղեկատվական ՀԿ-ի նախագահ)- 19 ձայն, Սոնա Այվազյան (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի փոխտնօրեն) - 18 ձայն, Էրիկ Գրիգորյան (Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիայի համանախագահ)- 6 ձայն և Արթուր Համբարձումյան (Civil Voice ՀԿ-ի իրավաբան)- 4 ձայն:

Ընտրության արդյունքների արձանագրությունը հասանելի է հետևյալ հղումով <http://crm.aua.am/eiti/elections/>:

Ընտրություններից հետո, հուլիսի 12-ի հերթական հանդիպմանը Արթուր Ղազարյանն անձնական նկատառումներով ինքնաբացարկ է հայտնել և, հաշվի առնելով, որ մարզային քվոտան սահմանվել և ապահովվել է նախորդ ընտրական ցիկլի ընթացքում, իսկ նոր ընտրական գործընթաց սկսելու համար պետք էր գրոյական կետից մշակել և կազմակերպել ամբողջ գործընթացը՝ ներկա գտնվողների մեծամասնությունը համաձայնվել է, որ նոր ընտրական գործընթացի նախաձեռնումը նպատակահարմար չէ: Առավել նպատակահարմար, արդարացի և նաև իրավական տեսանկյունից ճիշտ է, եթե ԲՇԽ-ի ինքնաբացարկ հայտնած անդամի փոխարեն նրա տեղը զբաղեցնի ընտրության ժամանակ առավել շատ ձայներ հավաքած հաջորդ թեկնածուն, ով Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիայի համանախագահ Էրիկ Գրիգորյանն է: Հուլիսի 12-ի հանդիպման արձանագրությունը հասանելի է հետևյալ հղումով <http://crm.aua.am/eiti/meeting-minutes-and-registration-lists/>:

Ընտրության արդյունքների և ինքնաբացարկի արդյունքում տեղի ունեցած փոփոխությունների մասին տեղեկությունները հաղորդվել է ՀՀ կառավարությունում ԱՃԹՆ հարցերով պատասխանատու համապատասխան պաշտոնյաներին: Նամակները հասանելի են հետևյալ հղումով <http://crm.aua.am/lettersgov/>: